

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՍՆՆԴԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՎԱՐԴԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԽՈՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Առաջատար
կազմակերպություն՝

**ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 6-ին, ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում (0025, ք. Երևան, Աբովյան փ. 52) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 4-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

 Աննա Հովիկի
Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակներում սննդային թափոնների (food waste) և սննդային կորուստների (food loss) հիմնահարցը վերածվել է համաշխարհային օրակարգային թեմայի՝ միաժամանակ ներառելով տնտեսական արդյունավետության, սոցիալ-էթիկական պատասխանատվության և բնապահպանական անվտանգության ասպեկտները: Մննդի արտադրությունը կենսական նշանակություն ունեցող համակարգ է, որը միևնույն ժամանակ սպառում է մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ՝ հողի, ջրի, էներգիայի և աշխատուժի ինտենսիվ ներգրավմամբ: Երբ այդ շղթայում արտադրված սնունդը չի հասնում վերջնական սպառման փուլին, ապա վատնվում է ոչ միայն արտադրված սննդամթերքը, այլև դրա արտադրության համար ներդրված ամբողջ ռեսուրսները: Հետևաբար սննդային թափոնների խնդիրը պետք է դիտարկել ոչ թե որպես միայն կենցաղային կամ սանիտարական հարց, այլ որպես սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավեր, որի լուծումը պահանջում է համակարգային մոտեցում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ արտադրվող սննդի զգալի մասը (մոտ մեկ երրորդը) չի սպառվում՝ դառնալով թափոն¹: Արդյունքում՝ արտանետվում են հսկայական ծավալի ջերմոցային գազեր, որոնք կլիմայական փոփոխությունների մարդածին գործոններ են: Հետևաբար սննդային թափոնների կառավարումը կլիմայական քաղաքականությանն ուղղված կանոր գործիք է, որը պետք է դիտարկել և՛ արտադրության, և՛ սպառման համատեքստում:

Գիտական խոսույթում վերջին տարիներին ուսումնասիրվում են ոչ միայն սննդային թափոնների ծավալային ցուցանիշները, այլև դրանց սահմանումները ինչպես նաև չափման ավելի ճշգրիտ մեթոդաբանությունների և կառավարման նոր մոտեցումների ներդրման հեռանկարները:

Տարբեր միջազգային և տարածաշրջանային կառույցներ (օրինակ՝ FAO, EU FUSIONS Program, EPA) առաջարկում են տարբերակված մոտեցումներ՝ հաշվի առնելով սննդային շղթայի փուլերը, սննդի օգատործվող և չօգտագործ բաղադրիչների տարանջատումը ինչպես նաև թափոնների կառավարման հետագա ուղղությունները (վերաօգտագործում, վերամշակում, էներգիայի վերականգնում կամ վերջնական հեռացում): Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները դեռ գտնվում են հայեցակարգային և մեթոդաբանական ճշգրտման փուլում, իսկ երկրների միջև համեմատելի տվյալների սահմանափակ լինելը դժվարացնում է քաղաքականության արդյունքայնության գնահատումը և արդյունավետ միջամտությունների նախագծումը:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո թափոնների, այդ թվում՝ սննդային թափոնների կառավարման հարցերը չեն ընկալվել որպես առաջնահերթություն՝

¹ FAO, "Global food losses and food waste – Extent, causes and prevention.," Food and Agriculture Organization (FAO) of the United Nations, 2011, Accessed: Feb. 13, 2026. [Online]. Available: <https://www.fao.org/4/mb060e/mb060e.pdf>

պետական քաղաքականության կամ երկարաժամկետ պլանավորման շրջանակներում: Այս բացը պայմանավորված է եղել ՀՀ նորանկախ շրջանի գերակա օրակարգերով, այդ թվում՝ տնտեսական վերականգնում, գործազրկության ու աղքատության նվազեցում, անվտանգային մարտահրավերները: Արդյունքում՝ թափոնների կանխարգելման գաղափարը հասարակության լայն շրջանակներում ուշադրության չի արժանացել:

Սակայն վերջին տարիներին արտաքին և ներքին գործոններով պայմանավորված պատկերը աստիճանաբար փոխվում է: Միջազգային մակարդակում կայուն զարգացման օրակարգը և «գրո թափոն» նախաձեռնությունների խթանումը աստիճանաբար ձևավորում են նոր քաղաքականությունների պահանջներ ու չափանիշներ: Այս գործընթացը հատկապես պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 2030 թվականը սահմանված Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) շրջանակում պետությունները պարտավորվում են չափելի առաջընթաց ապահովել՝ թափոնների կանխարգելման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման ուղղություններով:² Արդյունքում ԿՁՆ-ը դառնում են ազգային քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման հիմնական հենակետերը: Այս համատեքստում Հայաստանի համար նշանակալի դեր է խաղում Եվրոպական միության հետ համագործակցության խորացումը, ներառյալ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA), որի շրջանակում շեշտադրվում են թափոնների կառավարման, կլիմայի փոփոխության մեղմման և շրջանաձև տնտեսության անցման ուղղությունները:³

ՀՀ-ում տվյալ թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները խիստ սահմանափակ են, ինչը ևս հանդիսանում է թեմայի ուսումնասիրման արդիականության կարևոր ցուցիչներից մեկը:

Շեռագոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության հիման վրա ձևավորել խնդրի լուծման ուղիներ և մշակել ՀՀ սննդային թափոնների կանխարգելման ու նվազեցման ուղղությամբ հեռանկարային զարգացման գործնական կառուցակարգեր: Նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

2 United Nations, “Transforming our world: The 2030 Agenda for Sustainable Development.,” United Nations, 2015, Accessed: Feb. 02, 2026. [Online]. Available: https://www.un.org/ohrlls/sites/www.un.org.ohrlls/files/2030_agenda_for_sustainable_development_web.pdf?utm_source=chatgpt.com

3 Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, “Strategic Agenda for the EU-Armenia Partnership,” 2021. [Online]. Available: <https://www.mfa.am/filemanager/%D5%80%D5%80-%D4%B5%D5%84/Strategic%20Agenda%20for%20the%20EU-Armenia%20Partnership.pdf>. [Accessed: March. 09, 2026].

- Ուսումնասիրել սննդային թափոնների կառավարման պատմական զարգացումները և արդի մոտեցումների ձևավորումը՝ համաշխարհային մարտահրավերների և կայուն զարգացման օրակարգի համատեքստում:
- Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման ոլորտին առնչվող իրավական և նորմատիվ կարգավորումները, ինչպես նաև մարզային ռազմավարական պլանները՝ բացահայտելով սննդային թափոնների կառավարման վերաբերյալ օրենսդրական և ռազմավարական պլանավորման հիմնական բացերը:
- Գնահատել ԵՄ-27 երկրներում սննդային թափոնների քանակի վրա սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը՝ տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ, և ստացված արդյունքների հիման վրա մշակել ՀՀ սննդային թափոնների կառավարման կատարելագործման հիմնական կառուցակարգերը:
- Ուսումնասիրել համայնքներում բնակչության վերաբերմունքը սննդային թափոնների կառավարման խնդրի նկատմամբ՝ բացահայտելով գերակշռող վարքագծային մոտեցումները և լուծումների վերաբերյալ ընկալումները:
- Ուսումնասիրել Հայաստանի հանրային սննդի կետերում սննդային թափոնների կառավարման հիմնական գործելակերպերը և առաջարկել բարելավման ուղիներ՝ համադրելով միջազգային փորձի հետ:
- Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների համադրմամբ բացահայտել ՀՀ սննդային թափոնների կառավարման համակարգում առկա հիմնախնդիրները:
- Մշակել ՀՀ սննդային թափոնների կառավարման և ոլորտի զարգացման գործնական կառուցակարգեր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը՝ ՀՀ սննդային թափոնների կառավարման համակարգն է: Ատենախոսության առարկան՝ ՀՀ-ում սննդային թափոնների կառավարման հիմնահարցերն են:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների տեսական հիմքը կազմել են հայ և օտարերկրյա հեղինակների գիտական աշխատությունները, որոնք վերաբերում են սննդային թափոնների կառավարման խնդիրների ուսումնասիրությանը, ոլորտի կազմակերպման և կարգավորման հարցերին, ինչպես նաև թափոնների կառավարման քաղաքականությունների ու գործիքակազմերի գնահատմանը:

Ատենախոսությունում կիրառվել են գիտական հետազոտության մի շարք մեթոդներ՝ ինդուկտիվ և դեդուկտիվ վերլուծություն, վիճակագրական, տնտեսաչափական մեթոդներ, ինչպես նաև fsQCA (անորոշ բազմությունների որակական համեմատական վերլուծություն): Կիրառվել են նաև մի շարք լրացուցիչ քանակական գնահատումներ՝ տվյալների համադրելիության և արդյունքների վստահելիության ապահովման նպատակով:

Ուսումնասիրության տեղեկատվական հիմք են ծառայել սննդային թափոնների կառավարմանը վերաբերող տեղական և միջազգային օրենսդրական ակտերը, Եվրոպական միության պաշտոնական վիճակագրական տվյալները (Eurostat), տարբեր վերլուծական և տեղեկատվական նյութեր, ինչպես նաև հեղինակի կողմից իրականացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները:

- Ատենախոսության շրջանակում գնահատվել է ՀՀ-ում սննդային թափոնների կանխարգելմանն ուղղված նորարարական բիզնես մոդելի տեղայնացման ֆինանսատնտեսական իրագործելիությունը:
- Հետազոտության շրջանակում fsQCA մեթոդաբանության կիրառմամբ իրականացվել է Հայաստանի և Հունաստանի հանրային սննդի կետերում սննդային թափոնների կառավարման համեմատական վերլուծություն, ինչի արդյունքում առաջարկվել է ՀՀ ռեստորաններում կիրառել սննդային թափոնների նվազեցման համար անհրաժեշտ և բավարար 4 հիմնական պայմաններ:
- Տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ գնահատվել է ԵՄ-27 երկրներում սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը սննդային թափոնների ծավալների վրա, և ստացված արդյունքների շնորհիվ հիմնավորվել են ՀՀ-ում սննդային թափոնների կառավարման առաջնահերթ ուղղությունները:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:

Թեկնածուական ատենախոսության շրջանակում ստացված արդյունքները և ներկայացված առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և շահագրգիռ այլ պետական մարմինների կողմից՝ օրենսդրական նախաձեռնությունների, սննդային թափոնների կառավարմանն առնչվող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ինչպես նաև ոլորտում իրականացվող պետական քաղաքականության կատարելագործման նպատակով: Միաժամանակ, դրանք կարող են օգտակար լինել բիզնես ոլորտի ներկայացուցիչների և մասնավոր հատվածի ներդրողների համար՝ ոլորտի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու, գործունեության ուղղությունները հստակեցնելու և կառավարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու գործում: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել նաև այլ հետազոտական աշխատանքներում՝ ասպիրանտների և գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են Մոլդովայի Տեխնիկական համալսարանի կողմից կազմակերպված «Մրցունակություն և կայուն զարգացում» խորագրով յոթերորդ միջազգային տնտեսական գիտաժողովում, ինչպես նաև Երևանում անցկացված Կանաչ գյուղատնտեսությանը նվիրված

առաջին միջազգային գիտաժողովում և ԵՊՀ-ում անցկացված «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով միջազգային գիտաժողովում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու նորույթները ամփոփված են հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Շարադրանքը կազմել է 155 էջ՝ ներառյալ գրականության ցանկը: Ատենախոսությունը պարունակում է 19 աղյուսակ, 15 գծապատկեր և 3 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, մեթոդաբանությունը և տեղեկատվական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և կիրառական հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ «**Սննդային թափոնների կառավարման խնդիրը որպես գլոբալ սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավեր**» գլխում, անդրադարձ է կատարվել սննդային թափոնների կառավարման հիմնախնդրի տեսական և հայեցակարգային վերլուծությանը՝ այն դիտարկելով որպես համաշխարհային սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավեր: Գլխում ուսումնասիրվում են սննդային թափոնների կառավարման գաղափարի ձևավորման պատմական փուլերը, դրանց առաջացման հիմնական պատճառները, ինչպես նաև տնտեսական և բնապահպանական հետևանքները ու չափման մեթոդաբանությունները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդային թափոնների նկատմամբ վերաբերմունքը ժամանակի ընթացքում էապես փոխվել է. սկզբնական փուլում, որը ներառում է մինչև 1770 ական թվականները, սննդային թափոնները ընկալվել են որպես անօգուտ և վտանգավոր մնացորդներ, սակայն արդյունաբերական զարգացման և բարձր ուրբանիզացիայի պայմաններում աստիճանաբար ձևավորվել է թափոնների վերաօգտագործման և ռեսուրսային արժեքի ընկալումը: Հատկապես վերջին տասնամյակներում սննդային թափոնների խնդիրը դարձել է միջազգային քաղաքականության կարևոր ուղղություն՝ կապված կայուն զարգացման նպատակների, շրջանաձև տնտեսության և կլիմայի փոփոխության մեղմման քաղաքականությունների հետ: Գլխում նաև քննարկվում են «սննդային կորուստ» և «սննդային թափոն» հասկացությունների տարբեր սահմանումները՝ ներկայացված միջազգային կազմակերպությունների կողմից (FAO, EU FUSIONS, EPA) և դրանցում առկա առանցքային սահմանումը դուրս է բերվել և ներկայացվել գծապատկեր 1-ում: Այնուհետև անդրադարձ է կատարվել սննդային թափոնների առաջացման պատճառներին՝ կիրառելով համակարգային մտածողության


մոտեցումը: Սննդային թափոնները դիտարկվում են որպես բազմաշերտ և փոխկապակցված գործընթացների արդյունք, որը ձևավորվում է սննդի մատակարարման ամբողջ շղթայի ընթացքում՝ «դաշտից մինչև պատառաքաղ»: Վերլուծության շրջանակում առանձնացվում են հիմնական դերակատարները՝ ֆերմերներ, արտադրողներ, վերամշակողներ, մատակարարներ, մանրածախ առևտրի կազմակերպություններ, HoReCa ոլորտի ներկայացուցիչներ և վերջնական սպառողներ:



Գծապատկեր 1. Սննդային թափոնների սահմանումներն ըստ տարբեր գիտական աղբյուրների⁴

Սննդային թափոնների ձևավորման վրա ազդում են ոչ միայն արտադրական կամ տեխնիկական գործոնները, այլև սոցիալ-մշակութային արժեքները, սպառողական վարքագիծը, բիզնես ռազմավարությունները, պետական քաղաքականությունը և տեխնոլոգիական զարգացումները (գծ.2): Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև սննդային թափոնների տնտեսական և բնապահպանական հետևանքներին, ինչպես նաև դրանց չափման միջազգային մեթոդաբանություններին: Արձանագրվում է, որ սննդային թափոնները հանգեցնում են ոչ միայն սննդի կորստի, այլև դրանց արտադրության համար օգտագործված հողային, ջրային և էներգետիկ ռեսուրսների վատնման: Միաժամանակ սննդային թափոնները զգալիորեն նպաստում են ջերմոցային գազերի արտանետումների աճին և էկոհամակարգերի վրա ճնշման ուժեղացմանը:

⁴ Կազմված է հեղինակի կողմից



Գծապատկեր 2. Ռեսուրսների վերականգնման համակարգը ⁵

Ներկայացվել են նաև սննդային թափոնների չափման մեթոդաբանական մոտեցումները, մասնավորապես՝ Եվրոպական միության կողմից մշակված միասնական չափման համակարգը, որը նախատեսում է տվյալների հավաքագրում սննդի մատակարարման շղթայի բոլոր փուլերում՝ առաջնային արտադրությունից մինչև վերջնական սպառում:

Այսպիսով, ատենախոսության առաջին գլուխը ձևավորում է հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը՝ ընդգծելով, որ սննդային թափոնների խնդիրը պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին տեխնիկական խնդիր, այլ որպես բազմակողմանի սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգային մարտահրավեր, որի արդյունավետ կառավարումը պահանջում է համակցված քաղաքական, տնտեսական և վարքաբանական լուծումներ:

Ատենախոսության երկրորդ՝ «Սննդամթերքի թափոնների կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն» գլխում հիմնավորվել են Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների ոլորտում առկա

⁵ E. Iacovidou, J. N. Hahladakis, and P. Purnell, “A systems thinking approach to understanding the challenges of achieving the circular economy”, Environmental Science and Pollution Research, vol. 28, no. 19, 2021, doi: 10.1007/s11356-020-11725-9.

հիմնախնդիրները: Երևան քաղաքի օրինակով ներկայացվել են սպառողների շրջանում իրազեկվածության մակարդակը, առավել հաճախ վատնվող սննդամթերքի տեսակները և դրանց կորստի դրամական չափը: Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ մարզերի ռազմավարական պլաններում սննդային թափոնների կառավարման հիմնահարցի առկայությանը: Պարզ է դարձել, որ մարզային ռազմավարական պլաններում սննդային թափոնների վերաբերյալ ակնարկ չի կատարվել, հետևաբար չի դիտարկվել որպես մարզային առաջնահերթություն: Գլխի հետազոտական կարևոր հիմնաքարերից է նաև քաղաքականությունների մշակման և ներդրման եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրությունը: ԵՄ-27 երկրների համապարփակ տնտեսաչափական ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է նաև սոցիալ-տնտեսական գործոնների կապը սննդային թափոնների ծավալների հետ, որի հիման վրա վեր են հանվել խնդրի առավել արդյունավետ հասցեագրման և կառավարման կատարելագործման ուղղությունները:

Հայաստանի և Հունաստանի փորձի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե Հունաստանում սննդային թափոնների կառավարումը դիտարկվում է որպես ավելի համակարգված քաղաքական և գործնական ուղղություն, ապա Հայաստանում ոլորտը դեռևս բախվում է իրավական, ինստիտուցիոնալ և կիրառական բացերի: Այդ պատճառով եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրությունը կարևոր հիմք է դառնում ՀՀ-ում սննդային թափոնների կառավարման քաղաքականության կատարելագործման, տեղական իրավակարգավորման ամրապնդման և գործնական կառուցակարգերի ներդրման համար:

Ատենախոսության շրջանակում հավաքագրվել են ԵՄ-27 երկրների վերաբերյալ պանելային կառուցվածքի տվյալներ 2021-2023թթ. ժամանակահատվածի համար: Տնտեսաչափական մեթոդի կիրառման տրամաբանությունը ներկայացված է գծապատկեր 3-ում: Պանելային տվյալների վերլուծության հիմնական մոդելի ընդհանրական տեսքը հետևյալն է՝

$$Y_{it} = \beta_0 i + \beta_1 X_{1,it} + \beta_2 X_{2,it} + \dots + \beta_n X_{n,it} + \omega_i + \varepsilon_{it}$$

Որպեղ՝

i – հանդիսանում է դիտարկվող միավորի (պետություն) ինդեքսը:

t – հանդիսանում է դիտարկվող ժամանակահատվածի ինդեքսը:

Y_{it} կախյալ փոփոխականն է *i*-րդ պետության համար *t* ժամանակահատվածում:


ω_i տվյալ երկրի ժամանակից անկախ բնութագրիչն է (ֆիքսված էֆֆեկտը):

$\beta_n X_{n,it}$ հաշվարկված ռեգրեսիոն գործակիցների վեկտորն է:

ε_{it} ՝ պատահական գործոնը (ռեգրեսիայի սխալը)

Շեղանկության մեջ ներկայացված տնտեսաչափական մոդելը բաղկացած է աղյուսակ 1-ում ներկայացված կախյալ և անկախ փոփոխականներից: Կախյալ փոփոխականը՝ սննդային թափոնների ծավալը, արտահայտվում է մեկ շնչի

հաշվով կիրառամներով: Անկախ փոփոխականները ընտրվել են՝ հիմնվելով միջազգային փորձի վրա:



Գծապատկեր 3. Տնտեսաչափական մեթոդի կիրարկման տրամաբանությունը:⁶

Անհավասար բաշխումներ ցուցաբերող փոփոխականները մեր կողմից բերվել են բնական լոգարիթմական ձևափոխության: Այս ձևափոխությունը նպաստում է հետերոսկեդաստիկության նվազեցմանը և թույլ է տալիս արդյունքները մեկնաբանել առաձգականությունների միջոցով:

Ռեգրեսիոն վերլուծությունը կատարելուց առաջ, անկախ փոփոխականների միջև հնարավոր բազմակողմնաբարությունը հայտնաբերելու համար ուսումնասիրվել է Պիրսոնի կոռելյացիոն մատրիցը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում: Փոփոխականների մեծ մասը ցույց են տալիս ցածրից մինչև միջին կորելյացիաներ, որը վկայում է բազմակողմնաբարության համեմատաբար ցածր ռիսկի մասին: Այնուամենայնիվ, որոշակի զույգեր, ինչպիսիք են կրթական մակարդակը և շրջակա միջավայրի հարկային եկամուտները, ցուցաբերում են ավելի ուժեղ կորելյացիաներ:

⁶ Կազմված է հեղինակի կողմից

Մոդելում ներառված փոփոխականները ⁷

Կախյալ փոփոխականներ	
y ₁	Մեկ շնչին բաժին ընկնող սննդային թափոնների քանակը (կգ/մարդ)
Անկախ փոփոխականներ	
x ₁	Բնակարանային ծախսի գերծանրաբեռնվածության մակարդակը (%)
x ₂	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (Եվրո)
x ₃	Կրթություն (բակալավր)
x ₄	Կրթություն (մագիստրատուրա)
x ₅	Գործազրկության մակարդակը (%)
x ₆	Բնապահպանական հարկեր (միլիոն Եվրո)
x ₇	Պետական աջակցություն գյուղատնտեսության ոլորտում
x ₈	Նյութերի շրջանաձև օգտագործում (%)
x ₉	Միջին տնային տնտեսության չափը
x ₁₀	Գերբնակեցման մակարդակը
x ₁₁	Բնակչության խտությունը (մարդ/կմ ²)

Չնայած կրթական մակարդակը (ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի մակարդակներ) և շրջակա միջավայրի հարկային եկամուտներն ունեն բարձր կորելացիա, սակայն դրանք ներկայացնում են հայեցակարգային առումով տարբեր ոլորտներ՝ սոցիալական կապիտալն ընդդեմ շրջակա միջավայրի քաղաքականության, հետևաբար նպատակահարմար են համարել դրանց պահպանումը մոդելում:

Կորելացիոն Մատրից⁸

	-1	-2	-3	-4	-5	-6	-7	-8	-9	-10	-11
(1) Բնակարանային ծախսի գերծանրաբեռնվածության մակարդակը	1										
(2) ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (Եվրո)	-0,021	1									
(3) Կրթություն (բակալավր)	0,109	-	1								
(4) Կրթություն (մագիստրատուրա)	0,058	-0,017	0,927	1							
(5) Գործազրկության մակարդակը	0,395	-0,102	-0,015	0,092	1						
(6) Բնապահպանական հարկեր (միլիոն Եվրո)	0,151	-0,084	0,917	0,906	0,019	1					
(7) Պետական աջակցություն գյուղատնտեսության ոլորտում	0,139	-0,407	0,078	0,055	0,018	0,207	1				
(8) Նյութերի շրջանաձև օգտագործում (%)	-0,046	0,177	0,256	0,288	-0,142	0,428	0,214	1			
(9) Միջին տնային տնտեսության չափը	-0,087	-0,257	-	-0,091	0,012	-0,264	-	-	1		
(10) Գերբնակեցման մակարդակը	0,182	-0,522	-0,017	-	-	-	0,352	0,279	-	1	
(11) Բնակչության խտությունը (մարդ/կմ ²)	-0,124	0,096	-	-	-	0,003	0,438	0,342	-	-	1
			0,047	0,067	0,259	0,067	0,504	0,003	0,379		

⁷ V. Aleksanyan et al., “Exploring the Drivers of Food Waste Across EU Member States: A Socio-Economic and Environmental Perspective,” Foods, vol. 14, no. 24, p. 4174, Dec. 2025, doi: 10.3390/foods14244174.

⁸ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Եվրոպական միության վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների հիման վրա կատարված քանակական գնահատումների արդյունքում:

Աղյուսակ 3.

Ռեգրեսիայի արդյունքները⁹


	(1) Ֆիքսված էֆեկտ	(2) Պատահական էֆեկտ	(3) Ընդհանուր OLS
Բնակարանային ծախսի գերծանրաբեռնվածության մակարդակը	1.133	5.279**	5.279**
	(5.351)	(2.203)	(2.629)
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (Եվրո)	0.0480	0.204***	0.204***
	(0.0621)	(0.0385)	(0.0616)
Կրթություն (բակալավր)	-13.74	-0.253**	-0.253*
	(23.69)	(0.122)	(0.145)
Կրթություն (մագիստրատուրա)	-0.0541	-0.134**	0.134*
	(0.0800)	(0.0597)	(0.0761)
Գործազրկության մակարդակը	1.937	7.522	7.522
	(1.622)	(5.980)	(7.792)
Բնապահպանական հարկեր (միլիոն Եվրո)	-0.0373	-0.114**	-0.114***
	(0.0831)	(0.0445)	(0.0389)
Պետական աջակցություն գյուղատնտեսության ոլորտում	0.444	0.922***	0.922***
	(0.316)	(0.243)	(0.170)
Նյութերի շրջանաձև օգտագործում (%)	1.135	-3.995*	-3.995*
	(1.48)	(2.11)	(2.072)
Միջին տնային տնտեսության չափը	-1.070	5.078	5.078
	(1.208)	(4.031)	(4.87)
Գերբնակեցման մակարդակը	1.543	-9.938	-9.938
	(3.054)	(1.364)	(1.175)
Բնակչության խտությունը (մարդ/կմ ²)	-0.0332	0.357***	0.357***
	(0.116)	(0.124)	(0.0862)
_cons	-1.28845e+09	-1.07914e+09	-1.07914e+09
	(5.79563e+09)	(875562305.6)	(1.20108e+09)

Ոչ մի այլ փոփոխական չի գերազանցել բազմակոլինեարության շեմը ($r > 0.8$), ինչը հնարավորություն է տալիս բոլոր փոփոխականները ներառել մոդելում: Պանելային տվյալների վերլուծության համար ամենահամապատասխան մոդելը որոշելու համար կիրառվել է Հաուսմանի թեստը՝ ֆիքսված էֆեկտների և պատահական էֆեկտների մոդելները համեմատելու նպատակով: Բոլոր երեք մոդելների ռեգրեսիայի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում: Հաշվի առնելով, որ p արժեքը զգալիորեն բարձր է ավանդական նշանակալիության շեմից ($p > 0.05$), մենք չենք մերժում զրոյական վարկածը, որը ենթադրում է, որ անհատական մասնակիցների սխալները կապված չեն ռեգրեսորների հետ: Հետևաբար, Պատահական էֆեկտների մոդելը համարվում է առավել նպատակահարմար՝ ապահովելով արդյունավետ և համապատասխան գնահատումներ տվյալ վերլուծության համար:

⁹ Մշակված հեղինակի կողմից


Ատենախոսության երրորդ՝ «Սննդային թափոնների կառավարման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» գլխում իրականացվել է համայնքային հավաքական կերպարների նարատիվային վերլուծություն՝ կիրառելով մասնակցային կերպարահեն թեմատիկ վերլուծության (Participatory Persona-Based Thematic Analysis: PPBTA) մոդելը, որը նպատակ ուներ պարզելու սննդային թափոնների և կենսաթափոնների տեսակավորման և կառավարման վարքագծային խոչընդոտների սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ հիմքերը, առաջարկելով համայնքակենտրոն լուծումներ:

Տվյալները հավաքագրվել են ինը փորձագետների հետ անցկացված կիսակառուցվածքային հարցազրույցների և տասը ֆոկլու-խմբային քննարկումների միջոցով՝ Սևան համայնքի 60 տարբեր ներկայացուցիչների մասնակցությամբ: Ստացված տվյալների սինթեզի արդյունքում ձևավորվել են համայնքի վարքագծային հիմնական տիպերը ներկայացնող վեց հավաքական կերպարներ, որոնք հետագայում քննարկվել և վավերացվել են մասնակցային աշխատաժողովի ընթացքում: Մեթոդաբանության պատկերավոր ընթացքը ներկայացված է գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Մասնակցային կերպարահեն թեմատիկ վերլուծության մոդելի կիրառության սխեման ¹⁰

Գծապատկեր 4-ում նկարագրված մեթոդաբանական ընթացքի հինգերորդ փուլը՝ «Տվյալների վավերացման աշխատաժողովը», պատկերավոր կերպով ներկայացվել է գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. Մասնակցային կերպարահեն թեմատիկ վերլուծության մոդելի կիրառության սխեմայի 5-րդ փուլի կառուցվածքը¹¹

Հետազոտության արդյունքում ձևավորվել են վեց հիմնական վարքագծային կերպարներ, որոնք արտացոլում են սննդային թափոնների կառավարման նկատմամբ համայնքի տարբեր մոտիվացիոն և արժեքային մոտեցումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդային թափոնների կառավարման վարքագիծը Սևան համայնքում ձևավորվում է ոչ միայն իրազեկվածության մակարդակով, այլև ինստիտուցիոնալ վստահության, տնտեսական խթանների ընկալման, հիգիենիկ գործոնների և համայնքային նորմերի փոխազդեցությամբ: Հետազոտությունը փաստում է, որ արդյունավետ լուծումները պահանջում են կառավարման հիբրիդային մոտեցում՝ համադրելով ենթակառուցվածքային բարելավումները, վարքագծային միջամտությունները, խրախուսման և վերահսկողության կառուցակարգերը:

Աղյուսակ 4.

Չորս հնարավոր ուղիների արդյունքները ¹²

Ուղի	DTIM	FD	EP	CCE	Վերջնարդյունք (սննդի թափոնների նվազում)	Ընդհանուր ծածկողականություն	Հատուկ ծածկողականություն	Կոնսիստենտություն
Ուղի 1 (DTIM*EP-CCE)	•	⊗	•	○	Այո (1)	0.1675	0.08375	0.67
Ուղի 2 (DTIM*FD-CCE)	•	•	⊗	○	Այո (1)	0.41875	0.335	0.67
Ուղի 3 (EP*FD-CCE)	⊗	•	•	○	Այո (1)	0.1675	0.08375	0.67
Ուղի 4 (DIE*EP*FD)	•	•	•	⊗	Այո (1)	0.1675	0.08375	0.67

¹¹ Մշակված հեղինակի կողմից

¹² V. Aleksanyan et al., "Managing Food Waste in the Restaurant Sector: Comparative Insights from Greece and Armenia.," Sustainability, vol. 17, no. 24, p. 11386, Dec. 2025, doi: 10.3390/su172411386.

Ատենախոսության այս գլխում անորոշ բազմությունների որակական համեմատական վերլուծության (Fuzzy-Set Qualitative Comparative Analysis: fsQCA) միջոցով ներկայացվում է միջազգային փորձի՝ մասնավորապես Հունաստանի հանրային սննդի կետերում սննդային թափոնների կառավարման ընդունված գործելակերպերի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Հետազոտության շրջանակում դիտարկվել են Հունաստանի և Հայաստանի մայրաքաղաքները՝ Աթենքը և Երևանը: Յուրաքանչյուր քաղաքում ընտրվել է ութ ռեստորան՝ ընդհանուր 16 ռեստորան, որտեղ դեմ առ դեմ հարցումների միջոցով հավաքագրվել են առաջնային տվյալներ՝ ռեստորաններում սննդային թափոնների կառավարման վերաբերյալ:

Աղյուսակ 5.

Սննդային թափոնները նվազագույնի հասցնելու համար բավարար պայմաններ¹³

Ուղի	DIE	FD	EP	CCE	Վերջնարդյունք (Սննդի թափոնների աճ)	Ընդ. Ծածկողականություն	Հատուկ ծածկողականություն	Կոնս.
Ուղի 1 (~EP * ~FD * ~CCE)	○	⊗	⊗	⊗	Այո (I)	0.58625	0.335	0.67
Ուղի 2 (~DIE * ~EP * ~FD)	⊗	⊗	⊗	○	Այո (I)	0.335	0.08375	0.67

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ սննդի թափոնների նվազեցումը պայմանավորված է ոչ թե մեկ առանձին գործոնով, այլ մի քանի գործոնների համադրությամբ: Բացահայտվել են սննդի թափոնների կրճատման չորս հիմնական ուղիներ (աղյուսակ 4), որոնցում տարբեր համակցություններով ներառված են ապրանքների թվային կառավարումը, կրթական և իրազեկման ծրագրերը, ճկուն սննդառության տարբերակները և հաճախորդների ընտրության սահմանափակումը: Բոլոր չորս ուղիներն էլ ունեն 0.67 կոնսիստենտություն, այսինքն՝ տվյալ համադրությունների կիրառման դեպքերի շուրջ 67 %-ում արձանագրվել է սննդի թափոնների նվազում: Առավել նշանակալի ուղին բացահայտվել է թվային կառավարման, ճկուն սննդառության և հաճախորդի ընտրության ընդլայնման բացակայության համադրության արդյունքում, որի ընդհանուր ծածկողականությունը կազմել է 41.88 %: Մյուս երկու ուղիներից յուրաքանչյուրն ունեցել է 16.75 % ծածկողականություն: Այս դրական արդյունք ապահովող ուղիները հիմնականում վերաբերում են Հունաստանին, մասնավորապես՝ Աթենքում գործող ռեստորաններին: Միաժամանակ, ուսումնասիրությունը բացահայտել է անհրաժեշտ ու բավարար պայմաններ, որոնք

¹³Կազմված է հեղինակի կողմից

նպաստում են սննդի թափոնների կրճատմանը կամ ինչպես աղյուսակ 5-ում է ներկայացված պայմանների բացակայությունները որոնք հանգեցնում են սննդային թափոնների ծավալների աճին: Պետք է նշել, որ աղյուսակ 5-ում ներկայացված ուղիները բացահայտվել են ՀՀ ռեստորաններում: Այսպիսով, ակնհայտ է դառնում ՀՀ ռեստորանային բիզնեսներում կայուն գործելակերպերի ներդրման անհրաժեշտությունը: Հետևաբար, առաջարկվում է ռեստորանային բիզնեսների կայուն կառավարման գործընթացում կիրառել Հունաստանում բացահայտված և կիրառական նշանակություն ունեցող ուղիների կոնֆիգուրացիաները:

Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև սպառողների շրջանում կայուն գործելակերպերի նկատմամբ առկա հետաքրքրվածությանը և պահանջարկին: Արդյունքում պարզ է դարձել, որ թե՛ մարզերում, թե՛ Երևան քաղաքում «Too Good To Go» հավելվածը համարվում է ամենապահանջված նախաձեռնություններից մեկը: Այս համատեքստում, հասանելի տվյալների հիման վրա, փորձ է կատարվել գնահատելու տվյալ հավելվածի լիցենզիայի ձեռքբերման կամ դրա օրինակով նոր հայկական հավելվածի ստեղծման մոդելի ֆինանսատնտեսական նպատակահարմարությունը: Ֆինանսատնտեսական մոդելի արդյունավետությունը հիմնավորվում է նաև Աղյուսակ 6-ում ներկայացված զուտ ներկա արժեքի դրական ցուցանիշով ($NPV > 0$), ինչպես նաև ներքին շահութաբերության նորմայի՝ զեղչման 20% դրույքաչափը գերազանցող մակարդակով ($IRR > 20\%$): Միաժամանակ, ներդրման հետզնման ժամկետը (Payback Period) կազմում է 3.83 տարի: Հարկ է նշել, որ մոդելը հիմնվել է որոշակի ենթադրությունների վրա: Լիցենզիայով բուն հավելվածի ձեռքբերման և ներդրման վերաբերյալ հաշվարկներ չեն իրականացվել՝ անհրաժեշտ տեղեկատվության անհասանելիության պատճառով: Այդ իսկ պատճառով դիտարկվել է «Too Good To Go» մոդելի օրինակով նորարարական հայկական հավելվածի ստեղծման հնարավորությունը:

Աղյուսակ 6.

Ֆինանսական մոդելի արդյունավետությունը նկարագրող ցուցանիշները¹⁴

Արդյունք	Արժեք
NPV	\$123,319
IRR	27.3%
Payback period (տարիներ)	3.83

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները, ձևակերպվել են եզրահանգումներն ու հիմնական առաջարկությունները:

¹⁴ Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից, սեփական հաշվարկների և մոդելի հիմքում ընկած հիմնական ենթադրությունների հիման վրա:

1. Սննդային թափոնների հիմնախնդիրը հանդիսանում է բազմաշերտ սոցիալ-տնտեսական և բնապահպանական երևույթ, որի առաջացումը և դրսևորումները պայմանավորված են ոչ միայն սննդի մատակարարման շղթայի առանձին փուլերում առաջացող տեխնիկական կամ կազմակերպչական թերություններով, այլև վարքագծային, ինստիտուցիոնալ, տնտեսական և մշակութային գործոնների համակցված ազդեցությամբ: Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սննդային թափոնների խնդիրը պետք է դիտարկել որպես ամբողջական համակարգային երևույթ, որտեղ փոխկապակցված են արտադրողները, վերամշակողները, մատակարարները, մանրածախ առևտրի ոլորտը, հանրային սննդի կազմակերպությունները և վերջնական սպառողները: Նշված դերակատարների գործունեությունը ձևավորվում է նրանց արժեքային համակարգի, տնտեսական խթանների, քաղաքական միջավայրի և տեխնոլոգիական հնարավորությունների ազդեցության ներքո: Հետևաբար, սննդային թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը պահանջում է համակողմանի մոտեցում, որը ներառում է ինչպես տեխնիկական լուծումներ, այնպես էլ ինստիտուցիոնալ բարեփոխումներ և վարքագծային փոփոխությունների խթանում:

2. Սննդային թափոնների տնտեսական և բնապահպանական հետևանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց առաջացումը հանգեցնում է զգալի տնտեսական կորուստների, ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խորացման: Սննդամթերքի արտադրության համար օգտագործվող հողային, ջրային, էներգետիկ և մարդկային ռեսուրսները, երբ սնունդը չի սպառվում և դառնում է թափոն, փաստացի օգտագործվում է անարդյունավետ կերպով: Սա հանգեցնում է արտադրության իրական արդյունավետության նվազմանը և տնտեսության ընդհանուր արտադրողականության կրճատմանը: Միաժամանակ, սննդային թափոնների առաջացումը նպաստում է ջերմոցային գազերի արտանետումների ավելացմանը, բնական ռեսուրսների գերշահագործմանը և կենսաբազմազանության վրա լրացուցիչ ճնշման առաջացմանը: Այս համատեքստում սննդային թափոնների կրճատումը հանդիսանում է ոչ միայն տնտեսական արդյունավետության բարձրացման միջոց, այլև շրջակա միջավայրի պահպանության կարևոր գործիք, որը կարող է նպաստել կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

3. Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտը գտնվում է ձևավորման փուլում և բնութագրվում է ինստիտուցիոնալ, իրավական և կառավարման մի շարք սահմանափակումներով: Հետազոտության արդյունքները վկայում են, որ սննդային թափոնների կառավարման հարցերը երկար ժամանակ չեն հանդիսացել պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը, ինչը հանգեցրել է ոլորտի կարգավորման, տվյալների հավաքագրման և համակարգված կառավարման կառուցակարգների բացակայությանը: Առկա իրավական կարգավորումները հիմնականում կենտրոնացած են ընդհանուր թափոնների

կառավարման վրա և չեն նախատեսում սննդային թափոնների կանխարգելման, նվազեցման և վերարժևորման ուղղված հատուկ գործիքներ: Այս հանգամանքը սահմանափակում է ոլորտում նպատակային քաղաքականության մշակման և արդյունավետ միջամտությունների իրականացման հնարավորությունները: Առաջարկվում է մշակել և ընդունել սննդային թափոնների կառավարման ազգային ռազմավարություն, որը կհստակեցնի ոլորտի նպատակները, առաջնահերթությունները, պատասխանատու մարմինները և կառավարման գործիքակազմը: Ռազմավարության շրջանակներում անհրաժեշտ է ներդնել սննդային թափոնների չափման և մոնիթորինգի միասնական համակարգ՝ ապահովելով տվյալների հավաքագրում, վերլուծություն և տվյալահեն քաղաքականության մշակում:

4. Երևան քաղաքի սպառողների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ սննդային թափոնների առաջացման հիմնական պատճառները կապված են սպառողների վարքագծային առանձնահատկությունների, գնումների պլանավորման և պահպանման գործելակերպերի հետ: Մասնավորապես, հարցվածների տվյալներով, սննդային թափոնների «գլոբալ խնդրի գիտակցման» ինքնագնահատումը 10-բալանոց սանդղակում կազմել է միջինում 4.1 բալ, ինչը վկայում է իրազեկվածության համեմատաբար ցածր մակարդակի մասին: Միաժամանակ, առավել հաճախ վատնվող սննդատեսակների կառուցվածքում առաջատար են լավաշն ու հացը՝ 44.7%, ապա՝ բանջարեղենը՝ 28.6% և մրգերը՝ 27.6%, ինչը ցույց է տալիս, որ Երևանում թափոնների հիմնական բեռը ձևավորվում է ամենօրյա սպառման հիմնական խմբերից: Դրամային գնահատականները ևս հաստատում են խնդրի էական տնտեսական ազդեցությունը. միայն լավաշի և հացի մասով մեկ շնչի հաշվով տարեկան միջին կորուստը գնահատվել է 13,793.82 դրամ, իսկ ամեն օր վատնողների դեպքում այն հասնում է մոտ 42,966.85 դրամի: Բանջարեղենի համար մեկ շնչի հաշվով տարեկան միջին կորուստը կազմել է 6,927.67 դրամ (ամեն օր վատնողների դեպքում՝ 20,257.50 դրամ), կարտոֆիլի դեպքում՝ 4,649.18 դրամ (ամեն օր՝ 13,781.90 դրամ), իսկ մրգերի պարագայում՝ 16,750.20 դրամ (ամեն օր վատնողների դեպքում՝ 51,100 դրամ): Այս համատեքստում առաջարկվում է ուժեղացնել տեղական ինքնակառավարման մարմինների դերը սննդային թափոնների կառավարման գործընթացում՝ խոշոր քաղաքներում և համայնքներում ներդնելով սննդային թափոնների առանձին հավաքման փորձնական ծրագրեր, զարգացնելով համայնքային կոմպոստացման համակարգերը և իրականացնելով բնակչության իրազեկման ու կրթական միջոցառումներ:

5. Հանրային սննդի ոլորտում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ սննդային թափոնների առաջացումը պայմանավորված է ինչպես պահանջարկի կանխատեսման սահմանափակ ճշգրտությամբ, այնպես էլ պահեստավորման, մատակարարման և արտադրության գործընթացների կառավարման թերություններով: Միաժամանակ, միջազգային փորձի համեմատական վերլուծությունը, մասնավորապես Հայաստանի և Հունաստանի հանրային սննդի կազմակերպությունների միջև իրականացված

համեմատությունը, ցույց է տալիս, որ սննդային թափոնների կրճատումը հնարավոր է արդյունավետ կառավարման գործիքների, տեխնոլոգիական լուծումների և կազմակերպչական բարեփոխումների կիրառման միջոցով: Հանրային սննդի և HoReCa ոլորտում առաջարկվում է խթանել սննդային թափոնների կառավարման թվային համակարգերի ներդրումը, ճկուն սննդառության պայմանների ստեղծումը հաճախորդների համար, ճաշանցակներում չափաբաժինների առավել ընդգրկում և բազմազան հասանելիության ապահովումը, ինչպես նաև սահմանել հարկային կամ տնտեսական խթաններ սննդի վերաբաշխման համար և ներդնել կամավոր սերտիֆիկացման համակարգ՝ կայուն բիզնես գործելակերպերը խրախուսելու նպատակով:

6. ԵՄ-27 երկրների տվյալների հիման վրա իրականացված տնտեսաչափական վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդային թափոնների մակարդակը էապես պայմանավորված է սոցիալ-տնտեսական մի շարք գործոններով, ներառյալ բնակչության եկամուտների մակարդակը, կրթության աստիճանը, բնակչության խտությունը և սոցիալական անհավասարության ցուցանիշները: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ կրթության բարձր մակարդակը և իրազեկվածության աճը նպաստում են սննդային թափոնների կրճատմանը, մինչդեռ բարձր եկամուտների մակարդակը որոշ դեպքերում կարող է նպաստել սպառման աճին և թափոնների առաջացման ավելացմանը: Այս արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի համար, քանի որ թույլ են տալիս մշակել ապացույցահեն քաղաքականություն՝ ուղղված սննդային թափոնների նվազեցմանը՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը:

7. Հայաստանի Հանրապետությունում սննդային թափոնների կառավարման ոլորտում առկա է տվյալների համակարգված հավաքագրման և վերլուծության կառուցակարգերի բացակայություն, ինչը սահմանափակում է ոլորտի արդյունավետ կառավարման հնարավորությունները: Այս հանգամանքը ընդգծում է սննդային թափոնների չափման միասնական մեթոդաբանության ներդրման և տվյալների հավաքագրման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը:

8. Սննդային թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը Հայաստանում պահանջում է շրջանաձև տնտեսության սկզբունքների ինտեգրում, որը ենթադրում է ռեսուրսների առավելագույն արդյունավետ օգտագործում և թափոնների վերաբժևորման կառուցակարգերի զարգացում:

9. Սննդային թափոնների կառավարման ոլորտում միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունավետ քաղաքականությունը հիմնված է բազմամակարդակ կառավարման, պետական և մասնավոր հատվածների համագործակցության և հասարակության ակտիվ ներգրավվածության և մասնակցայնության վրա: Հաջողված երկրների փորձը ցույց է տալիս, որ սննդային թափոնների կրճատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ համատեղ կիրառվում են իրավական, տնտեսական, կրթական և տեխնոլոգիական գործիքներ: Այս համատեքստում Հայաստանի համար կարևոր է մշակել

համապարփակ ռազմավարություն, որը ներառում է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը:

10. Սևան համայնքում իրականացված մասնակցային կերպարահեն թեմատիկ վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ սննդային թափոնների նկատմամբ համայնքի բնակիչների վերաբերմունքը ձևավորվում է սոցիալ-մշակութային արժեքների, տնտեսական պայմանների և տեղական կենսակերպի համակցված ազդեցության ներքո: Բացահայտվել է, որ համայնքի բնակիչների զգալի մասը սննդային թափոնների առաջացումը չի ընկալում որպես համակարգային տնտեսական կամ բնապահպանական խնդիր, այլ հիմնականում դիտարկում է այն որպես անհատական կամ կենցաղային երևույթ: Միաժամանակ, պատումային վերլուծությունը ցույց է տվել, որ նույնիսկ այն բնակիչները, ովքեր բացասաբար են գնահատում սննդի վատնումը, հաճախ չեն կիրառում կանխարգելման գործնական կառուցակարգեր՝ պայմանավորված համապատասխան ենթակառուցվածքների, տեղեկատվության և տեխնիկական գործիքների բացակայությամբ: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ համայնքի բնակիչները պատրաստակամություն են հայտնում կիրառելու նորարարական լուծումներ, հատկապես այն դեպքում, երբ դրանք ապահովում են տնտեսական օգուտ կամ սննդի առավել արդյունավետ օգտագործման հնարավորություն: Այս արդյունքները վկայում են, որ սննդային թափոնների կառավարման արդյունավետ քաղաքականությունը պետք է հիմնված լինի համայնքների վարքագծային առանձնահատկությունների հաշվառման վրա և ներառի տեղական մակարդակում կիրառելի թվային և կազմակերպչական լուծումներ:

11. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված հարցումները վկայում են, որ Հայաստանի բնակիչների զգալի մասը գիտակցում է սննդային թափոնների խնդրի առկայությունը և պատրաստակամություն է հայտնում կիրառելու այնպիսի լուծումներ, որոնք թույլ կտան նվազեցնել սննդի վատնումը և միաժամանակ ապահովել տնտեսական օգուտ: Մասնավորապես, համայնքային մակարդակում արձանագրվել է, որ բնակիչները դրական են գնահատում սննդի վերաբաշխման գաղափարը, հատկապես այն դեպքերում, երբ այն ապահովում է սննդի ավելի մատչելի ձեռքբերման հնարավորություն կամ թույլ է տալիս խուսափել տնտեսական կորուստներից: Հաշվի առնելով սննդի վերաբաշխման համակարգված կառուցակարգերի բացակայությունը՝ առաջարկվում է ստեղծել սննդի թվային վերաբաշխման ազգային հարթակ՝ հիմնված «Too Good To Go» մոդելի վրա: Հարթակը կարող է կապ ապահովել սննդի ավելցուկ ունեցող բիզնեսների և սպառողների միջև, նվազեցնել սննդային թափոնները, կրճատել բիզնեսների տնտեսական կորուստները և բարձրացնել սննդի մատչելիությունը:

Կարևոր է նաև ընդգծել, որ առաջարկվում է բուհերում ներդնել սննդային թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության թեմաներին նվիրված ուսումնական մոդուլներ, կազմակերպել ուսանողական հետազոտական ծրագրեր, փորձնական նախագծեր և համագործակցային նախաձեռնություններ համայնքների և մասնավոր հատվածի հետ: Հատուկ կարևորություն ունի նաև բուհերի մասնակցությունը սննդի թվային վերաբաշխման հարթակների մշակման

և փորձարկման գործընթացում, ինչը կարող է նպաստել տեղական նորարարական լուծումների ստեղծմանը: Այսպիսով, բուիերի՝ մասնավորապես Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Երևանի պետական համալսարանի ակտիվ ներգրավումը կարող է էապես նպաստել սննդային թափոնների կառավարման գիտական հիմքերի ամրապնդմանը, և նորարարական լուծումների ստեղծմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները
արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Aleksanyan, V.; Arion, F.H.; Gevorgyan, S.; Markosyan, D.; Parsyan, S.H.; Mnacakanyan, K.; Oroian, F.C.; Muresan, I.C.; Arion, I.D.; Chis, S. Exploring the Drivers of Food Waste Across EU Member States: A Socio-Economic and Environmental Perspective. *Foods* 2025, 14, 4174.
2. Aleksanyan, V., Gevorgyan, S., Markosyan, D., Arion, F. H., Khachatryan, K., Oroian, F. C., ... & Chis, S. (2025). Managing Food Waste in the Restaurant Sector: Comparative Insights from Greece and Armenia. *Sustainability*, 17(24),
3. Gevorgyan S., “COMPARISON OF FOOD WASTE MANAGEMENT POLICES BETWEEN GREECE AND ARMENIA: POSSIBLE RECOMMENDATIONS FOR ARMENIA,” *Scientific Papers Series Management, Economic Engineering in Agriculture and Rural development*, vol. Vol.25, no. 1, pp. 409–418, 2025.
4. GEVORGYAN, S., & Aleksanyan, V. (2024). The Nature of Consumer (Household Sector) Food Waste and Primary Causes Behind It: Evidence from Armenia (Yerevan City). *Bulletin of Yerevan University G: Economics*, 15(2 (44)), 41-48.
5. Gevorgyan, S., Baghdasaryan, V., & Hakhinyan, L. (2025). Why do Strategies Remain Silent: The Discourse of Food Waste Management in the Regional Development Agendas of Armenian Marzes. *AgriScience and Technology*, 1(1), 60-66.
6. Markosyan, D., Aleksanyan, V., & Gevorgyan, S. (2025). Enhancing Food Loss and Waste Management for Improved Sustainable Agri-Food System: Empirical Study in the Republic of Armenia. *AgriScience and Technology*, 1(1), 77-84.

САРГИС ОВАННЕСОВИЧ ГЕВОРГЯН

Проблемы управления пищевыми отходами в Республике Армения

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук в области экономики 08.00.02 - "Экономика и управление народным хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится 6 июля 2026 года в 15:00 на заседании специализированного совета по экономике 015 Комитета высшего образования и науке Республики Армения, действующего в Ереванском государственном университете по адресу: г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Пищевые отходы и потери продовольствия становятся все более значимыми глобальными вызовами, поскольку они затрагивают экономическую эффективность, продовольственную безопасность, экологическую устойчивость и климатическую политику. В Армении данная проблема особенно актуальна, так как управление пищевыми отходами пока не сформировалось как полноценное стратегическое направление государственной политики, а исследования и практические механизмы в этой сфере остаются ограниченными. Целью исследования является комплексное изучение проблем управления пищевыми отходами в Республике Армения и разработка практических подходов к их предотвращению, сокращению и валоризации. Для достижения данной цели были поставлены следующие задачи:

- изучить историческое развитие управления пищевыми отходами и современные подходы в контексте глобальных вызовов,
- выявить наиболее часто выбрасываемые продукты питания в Ереване и оценить уровень осведомлённости потребителей,
- проанализировать основные пробелы в правовом, нормативном и стратегическом регулировании управления отходами в Республике Армения,
- оценить влияние социально-экономических факторов на уровень пищевых отходов в странах ЕС-27 и предложить направления адресных вмешательств для армянского контекста,
- изучить отношение жителей общин Республики Армения к проблеме управления пищевыми отходами,
- выявить основные проблемы системы управления пищевыми отходами в Республике Армения;
- разработать концептуальные рамки и практические механизмы управления пищевыми отходами на примере инновационных бизнес-моделей.

Объектом диссертационного исследования является система управления пищевыми отходами в Республике Армения. Предметом исследования выступают механизмы управления пищевыми отходами и факторы, определяющие их эффективность. В первой главе проблема управления пищевыми отходами

рассматривается в глобальном контексте, с обращением к истории её развития, основным этапам и современным подходам. Подчеркивается необходимость системного мышления, поскольку пищевые отходы представляют собой не только поведенческую или техническую проблему, но и многослойное явление с экономическими, социальными и экологическими последствиями. Также представлены основные методологические подходы к их измерению. Во второй главе анализируются продукты питания, наиболее часто выбрасываемые потребителями в Ереване. Рассматривается Закон РА «Об управлении отходами» в сравнении с действующей системой управления отходами в Греции, а также подчеркивается отсутствие данной проблемы в региональных стратегических планах Республики Армения. На примере стран ЕС-27 исследуется влияние социально-экономических показателей на объемы пищевых отходов с применением эконометрического анализа. В третьей главе представлен нарративный анализ коллективных персон на уровне общин с использованием модели Participatory Persona-Based Thematic Analysis (PPBTA). Анализ направлен на выявление социокультурных и институциональных барьеров, связанных с сортировкой и управлением пищевыми и биоотходами, а также на разработку решений, ориентированных на сообщества. Кроме того, в главе рассматриваются пути повышения эффективности управления пищевыми отходами в ресторанах, определяются наиболее амбициозные инициативы с точки зрения жителей общин и города Еревана, а также разрабатывается инновационная бизнес-модель для Республики Армения на примере приложения “Too Good To Go”. В результате исследования был выявлен ряд положений, обладающих теоретической, методологической и практической значимостью. В качестве научной новизны особенно выделяются следующие результаты:

- в рамках диссертации была оценена финансово-экономическая осуществимость локализации инновационной бизнес-модели, направленной на предотвращение пищевых отходов в Республике Армения,
- в рамках исследования с применением методологии fsQCA был проведён сравнительный анализ управления пищевыми отходами в предприятиях общественного питания Армении и Греции, в результате чего было предложено применить в ресторанах Республики Армения четыре основных необходимых и достаточных условия для сокращения пищевых отходов,
- с применением эконометрических методов было оценено влияние социально-экономических факторов на объёмы пищевых отходов в странах ЕС-27, а полученные результаты позволили обосновать приоритетные направления управления пищевыми отходами в Республике Армения.

SARGIS GEVORGYAN
FOOD WASTE MANAGEMENT ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation was submitted for the scientific degree of PhD in Economics in the field 08.00.02- “Economics and management of the economy and its spheres.”

The public defense of the dissertation will take place on July 6th, 2026, at 15: 00 at Yerevan State University (Kh. Abovyan str. 52, 0025, Yerevan, RA) at the meeting of the 015th Professional Council for Economics of the committee on Higher Education and Science of the Republic of Armenia.

ABSTRACT

Food waste and food losses are becoming increasingly significant global challenges, as they affect economic efficiency, food security, environmental sustainability, and climate policy. In Armenia, this issue is particularly relevant, since food waste management has not yet been formed as a fully developed strategic direction of state policy, while research and practical mechanisms in this field remain limited. The aim of the study is to comprehensively examine the problems of food waste management in the Republic of Armenia and to develop practical approaches for its prevention, reduction, and valorization. To achieve this aim, the following research objectives were set:

- to study the historical development of food waste management and modern approaches in the context of global challenges,
- to identify the food products most frequently discarded in Yerevan and assess the level of consumer awareness,
- to analyze the main gaps in the legal, regulatory, and strategic framework of waste management in the Republic of Armenia,
- to assess the influence of socio-economic factors on the level of food waste in EU-27 countries and propose directions for targeted interventions in the Armenian context,
- to study the attitudes of residents of Armenian communities toward the problem of food waste management,
- to identify the main problems of the food waste management system in the Republic of Armenia,
- to develop conceptual frameworks and practical mechanisms for food waste management based on the example of innovative business models.

The object of the dissertation research is the food waste management system in the Republic of Armenia. The subject of the research is the mechanisms of food waste management and the factors determining their effectiveness.

The first chapter examines the problem of food waste management in a global context, referring to the history of its development, its main stages, and contemporary approaches. The need for systems thinking is emphasized, since food waste is not merely a behavioral or technical problem, but a multilayered phenomenon with economic,

social, and environmental consequences. The chapter also presents the main methodological approaches currently used for measuring food waste. The second chapter analyzes the food products most frequently discarded by consumers in Yerevan. It examines the Law of the Republic of Armenia “On Waste Management” in comparison with the current waste management system in Greece, while also emphasizing the absence of this issue from the regional strategic plans of the Republic of Armenia. Using the example of EU-27 countries, the chapter also investigates the impact of socio-economic indicators on food waste volumes through econometric analysis. The third chapter presents a narrative analysis of collective personas at the community level using the Participatory Persona-Based Thematic Analysis (PPBTA) model. The analysis aims to identify the socio-cultural and institutional foundations of behavioral barriers related to the sorting and management of food waste and bio-waste, as well as to propose community-oriented solutions. In addition, the chapter discusses ways to improve the effectiveness of food waste management in restaurants, identifies the most ambitious initiatives from the perspective of residents of communities and the city of Yerevan, and develops an innovative business model canvas for the Republic of Armenia based on the example of the “Too Good To Go” application. As a result of the research, a number of findings with theoretical, methodological, and practical significance were identified. The following results are particularly highlighted as elements of scientific novelty:

- within the framework of the dissertation, the financial and economic feasibility of localizing an innovative business model aimed at preventing food waste in the Republic of Armenia was assessed;
- within the framework of the study, a comparative analysis of food waste management in food service establishments in Armenia and Greece was conducted using the fsQCA methodology, as a result of which four main necessary and sufficient conditions for reducing food waste were proposed for application in restaurants in the Republic of Armenia;
- using econometric methods, the influence of socio-economic factors on food waste volumes in EU-27 countries was assessed, and the obtained results made it possible to substantiate the priority directions of food waste management in the Republic of Armenia.

A handwritten signature in black ink, appearing to read "S. Gevorgyan". The signature is stylized with a large, looped initial "S" and a long horizontal stroke at the end.